Project funded by
EUROPEAN UNION

Tea types in English and Armenian

Herbal Tea

The flora of Armenia is unique and diverse. Although the territory of Armenia is small, its' flora is distinguished with richness and variety. 10 percent of species of flora in Armenia are herbs. In folk medicine they have always been using Rhamnus (Rhamnus), Hawthorn (Crataegus), Juniper (Juniperus), Eglantine (Rosa), and so on. Today the production of herbal teas is growing in Armenia. They pick thyme, mentha, ziziphora, oregano and other plants for teas.

Thyme (Thymus)

Tea can be made from leaves and stem of the mountain thyme. The taste of this herb is perfectly combined with black tea, but can also be used separately. It is used both fresh and dried in dishes. Creams, infusions and essential oils are prepared from thyme. It is widespread in almost all regions, in dry rocky slopes from the lower to upper mountain belt, in uncultivated areas, in subalpine meadows, etc.

Mint (Mentha)

This herb has several types. It is used as a seasoning and medicinal product in a fresh and dry state. There are 4 types of mint known in Armenia: field mint, long-legged mint, tinned mint and pepper mint.
The first two are common in all regions of Armenia, the third-only in cultivation, and the fourth-in the Lori region. Herbs grow in fields, meadows, vegetable gardens, wet places, on the banks of rivers and lakes, on roads. The leaves of the plant are mainly being used for treatment and tea. In medicine, it is used not only in the form of crop production, but also in the form of the essential oil obtained from it.

Melissa

It is a medicinal herb, contains essential oils (A-provitamin), vitamins C, B. It is found in the lower and middle mountainous areas of Tavush and Syunik regions, Armenia. It grows in dry, rocky places, in forest plantations.

It is used for both medical and cosmetic purposes, as well as in food and as tea.

Ziziphora

It contains essential oils. It's a honey producing plant. It is common in almost all the regions of Armenia. It grows in dry, rocky, sandy places from the foot to the upper mountain zone.

Oregano

It is widespread in dry forest and valley meadows of Armenia, in forest plantations, and in other places. The name "oregano" is of Greek origin. It means decorating the mountains. In another interpretation, this name means an improvement in vision, since the plant was also used for this purpose. It contains essential oils as well. It's a honey producing plant and good for seasoning and tea.

Linden

The flower of Linden is one of the oldest and most popular remedy in folk medicine. Linden flowers contain essential oils, tannins, vitamins C, E, carotene, sugar and other nutrients. It is found in the north-eastern regions of Armenia, in the middle and upper forest zones.

Rosehip

Rosehip contains more vitamin C than even lemon. Contains vitamins B1, B2, K, E, B6, bioflavonoids, sugar, pectin, vital acids, iron crystals, phosphorus, magnesium, calcium. It is spread in all regions. Grows on mountain slopes, forest edges, bushes, open areas (at altitudes of 900-2200 m), etc.

Թեյաբույսեր

Հայաստանի բուսական աշխարհը շատ առանձնահատուկ է և բազմատեսակ: Լինելով տարածքով փոքր երկիր՝ Հայաստանն առանձնանում է բուսական աշխարհի հարստությամբ և բազմազանությամբ:

Հայաստանի ֆլորայի տեսակային կազմի մոտ 10 տոկոսը հանդիսանում են դեղաբույսեր: Ժողովրդական բժշկության մեջ վաղուց լայնորեն օգտագործվում են գիհու (Juniperus), մասրենու (Rosa), սրոհունդի (Hypericum), ծորենու (Berberis) և այլ ցեղերին պատկանող բազմաթիվ ներկայացուցիչներ: Այսօր խոտային թեյերի արտադրանքը մեծ թափ է ստացել Հայաստանում: Թեյի համար հավաքվում է Ուրց (Thymus), Դաղձ (Mentha), Ուրցադաղձ (Ziziphora), Խնկածաղիկ (Origanum), Պատրինջ (Melissa), Լորենի (Linden) և այլն:

Ուրց (Thymus)

Լեռնային ուրցի ցողունից ու տերևներից կարելի է թեյ պատրաստել: Այս բույսի համը հիանալի համադրվում է սև թեյի հետ, բայց կարելի է նաև առանձին օգտագործել: Ուտելիքի մեջ օգտագործում է և՛ թարմ, և չորացրած վիճակում: Ուրցից պատրաստում են քսուքներ, թուրմեր և եթերայուղեր: Տարածված է գրեթե բոլոր մարզերի ստորինից մինչև վերին լեռնային գոտու չոր, քարքարոտ լանջերին, անմշակ վայրերում, ենթալպյան մարգագետիններում և այլն:

Դաղձ (Mentha)

Այս բույսը մի քանի տեսակ ունի: Օգտագործվում է որպես համեմունք և դեղաբույս՝ թարմ և չորացած վիճակում: Հայաստանում հայտնի է 4 տեսակ՝ դաղձ դաշտային, դաղձ երկարատերև, դաղձ լվածաղիկ և դաղձ պղպեղային: Առաջին երկուսը տարածված են ՀՀ բոլոր մարզերում, երկրորդը՝ միայն մշակության մեջ, իսկ չորրորդը՝ Լոռու մարզում:
Աճում են դաշտերում, մարգագետիններում, բանջարանոցներում, խոնավ վայրերում, գետերի և լճերի ափերին, ճամփեզրերին: Բուժման նպատակով օգտագործում են բույսի տերևները: Բժշկության մեջ կիրառվում է ոչ միայն բուսահումքի, այլև նրանից ստացվող եթերայուղի ձևով:

Պատրինջ (Melissa)

Դեղաբույս է, պարունակում է եթերայուղեր, (A-նախավիտամին), վիտամիններ C, B: Հանդիպում է Տավուշի, Սյունիքի մարզերի ստորին և միջին լեռնային գոտիներում: Աճում է չոր, քարքարոտ վայրերում, անտառի բացատներում: Այն օգտագործվում է թե՛ բժշկական, թե՛ կոսմետիկ նպատակներով, թե՛ սննդի մեջ և որպես թեյ:

Ուրցաղաղձ (Ziziphora)

Պարունակում է եթերայուղեր: Մեղրատու է: Տարածված է գրեթե բոլոր մարզերում: Աճում է ստորինից մինչև վերին լեռնային գոտու չոր, քարքարոտ, ավազոտ վայրերում:

Խնկածաղիկ

Տարածված է մեր հանրապետության չոր անտառային և հովտային մարգագետիններում, անտառների բացատներում և այլուր: «Օրիգանո» անունն ունի հունական ծագում. նշանակում է լեռներ զարդարող: Այլ մեկնաբանությամբ, այդ անունը նշանակում է տեսողություն լավացնող, քանի որ բույսը օգտագործվել է նաև այդ նպատակով:

Բույսը պարունակում է եթերայուղեր: Մեղրատու է, օգտագործվում է որպես համեմունք և թեյաբույս:

Լորենի

Ժողովրդական բժշկության մեջ ամենահին եւ ամենատարածված միջոցներից է լորենու ծաղիկը: Լորենու ծաղիկները պարունակում են եթերայուղ, դաբաղանյութեր, վիտամին C, E, կարոտին, շաքար եւ այլ օգտակար նյութեր: Հայաստանի տարաքում հանդիպում է հիմնականում հյուսիսարևելյան շրջաններում, միջին և վերին անտառային գոտիներում:

Մասուր

Մասուրը վիտամին C-ի քանակությամբ գերազանցում է անգամ կիտրոնին: Պարունակում է B1, B2, K, E, B6 վիտամիններ, կենսաֆլավոնոիդներ, շաքար, պեկտին, կենսական թթուներ, երկաթի բյուրեղներ, ֆոսֆոր, մագնեզիում, կալցիում: Տարածված է բոլոր մարզերում: Աճում է լեռնալանջերին, անտառեզրերին, թփուտներում, բաց տարածքներում (900-2200 մ բարձրություններում) և այլն: